IDBank

№ Կ-5-1508

20.05.2026թ.

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1. Սույն բանկային երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԷՎԱՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/Ախ-39-1 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 4,000,000 (չորս միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/Ախ-39-1 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2027թ. մայիսի 31-ին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 29.10.2027թ. ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ gnumner@mia.gov.am էլեկտրոնային հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-2026/Ախ-39-1 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրինության վարկային հաճախորդների հետ համագործակցության վարչության ղեկավար — Հայկ Վելիկյան

Գլխավոր հաշվապահի տեղակալ / Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարչության ղեկավար — Անուշ Հովհաննիսյան

Կատարող՝ Ա. Ղազարյան

G.Kanjyan

Digitally signed by G.Kanjyan
Date: 2026.05.20 10:27:46 +04'00'

ՀՀ, ք. Երևան, 0010, Վարդանանց փող. 13, Հեռ.՝ (+374) 10 59 33 00, Ֆաքս՝ (+374) 10 59 33 10
13 Vardanants str., Yerevan, 0010, RA , Tel.: (+374) 10 59 33 00, Fax: (+374) 10 59 33 10, SWIFT: ANIKAM 22
info@idbank.am | www.idbank.am